

– Գրիգոր եւ քեռին մեզ հետ էին. իւր տարիքէն վեր քաջութեամբ կը պատերազմէր. երբ մենք Գողթն էինք, յորդորեցի, որ երթան, որպէսզի Բիւրեղ մտատանջութենէ ազատի, գնացին, եւ թէպէտ հարցնել տուի՝ լուր չի կրցայ առնուլ:

Սեթայ կուլար կամաց ձայնով, Թեոդորոս խոժոռ վեր-վար կը պտըտէր, Յուսիկ կը խորհրդածէր, սպասաւորք եւ սպասուհիք իրենց տեարց օրինակին հետեւելով տխուր կերպարանք առեր էին:

Բայց Սեթայ քանի մը վայրկենէն վերջ, աչքերը սրբելով, դարձաւ իշխանին՝

– Գոնէ,– ըսաւ,– արժանավայել թաղում մը լինէր այդ առաքինի եւ հրեշտականման կնոջ:

– Թաղման հանդէսն կատարողը Յայոց օրինաւոր կաթողիկոսն է, Քրիստափոր ինքն,– ըսաւ Թեոդորոս,– ես իրմէ խնդրեցի, որ վայելուչ շիրիմ մը նաեւ կանգնէ իւր վրայ եւ նա խոստացաւ: Եւ պէտք եղած ծախքը նաեւ տուի:

Երկրորդ եւ երրորդ օրը ինչպէս միշտ Թեոդորոս իր ծանր զբաղմանց հետ էր. Սեթայ թէպէտ բարեկամուհին կը յիշէր՝ բայց գաւառին եւ մեծ տան մը հոգերը զինք գրաւած էին. միայն խեղճ Թենի տխուր էր ամիսներով եւ գրեթէ ոտքի վրայ հիւանդ կը նիհարնար ի մեծ մտատանջութիւն իւր ծնողաց: Իսկ Ատոմ առանց մարդու հետ խօսելու, իւր զինուորական մարզերէն քանի մը օրն անդամ մը կը դառնար, միսիթարական խօսքեր կ'ըներ աղջկան, անիծելով բոլոր Մամիկոնէից յիշատակը, նոքա, որ անհետ կը լինէին՝ եւ նոքա, որ իբրեւ ժառանգ Կոզովիտի գաւառը կը գրաւէին: Վասնզի Մուշեղ եւ Յամագասայ հօրեղբօրօրդիք Գրիգորի՝ իբրեւ ժառանգորդք՝ առանց երկար խոյզ եւ խնդիր ընելու եւ քիչ մը գոհութեամբ նաեւ Գրիգորի մահուան լուրը տարածելով գրաւեցին Կոզովիտ: